

ՄԱՏՆԵԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
“ՀԱՒԱՏԱՐՄԱՏ”Ը

Երջանկայիշատակ Կարապետ Եպիսկոպոս «Կնիք Հաւատոյ» գրքին սկիզբը գետնեղած իր հմտալից ներածութեան վերջին էջերուն մէջ (CX-CXIX) զբաղած է Վարդան Վարդապետի մը կողմէ կազմուած «Հաւատարմատ»ին հեղինակին ինքնութեան ճշգրտին հարցով: Ան իր առջև ունեցած է Ս. Էջմիածնի Մատենադարանին Հ. 565 = 512 ձեռագիրը, գրուած ՈՄԸ = 1209 թուին, Ըստ Կարապետ Եպիսկոպոսի քննարկման, յիշեալ Հաւաքածոն երկասիրողը կրնայ ըլլալ Հաղբատացի Վարդան Վարդապետը, որ «Շնորհալուծ Ժամանակ Կիրիկիայում գեղերելուց և Հաղբատ վերադառնալուց յետոյ մինչև 1210-15 թուականներն էլ ապրածն Կարող է լինել (էջ CXVI):

Այդ հարցի լուսաբանման կարևորնպատ մը կը բերէ մեր Զեռագրատան Թ. 2331 Գրչագիրը, որ «Վարդան Գիրք» կոչուած ժողովածու մըն է, բաղկացած երկու ուրոյն մասերէ, գրուած ընտիր երկրորդով, հին բամպակեայ փափուկ թուղթի վրայ: Այս յօդուածին համար մեզ հետաքրքրողը ձեռագրին երկրորդ մասն է, էջ 261-532, պրակ Ա-ԺԲ, որուն վերջին (508-529) էջերը կը պարունակեն Հայոց Հայրապետաց համառօտ գաւազնաագիրք մը, Ս. Գրիգոր Լուսաւորչէն մինչև Տէր Ստեփանոս, «ի թուականութեան ԶԼԹ» = 1290, որ իր գահակալութեան Զերբող տարին գերի կը տարուի: Ըստ այսմ ձեռագրին գրչութեան ժամանակը կրնայ զրուիլ ԺԳ. գարու վերջը:

Գալով բուն խնդրոյ առարկայ գրուածքին, որ Վարդան Վարդապետի անունը կը կրէ, կը տեսնենք որ ատոր սկիզբը կը գտնուի նախաբան յիշատակարան մը, որուն կը յաջորդեն «խօսք և պատուէր» ուղղուած գրքէն իր ապագայ տիրոջ և այս վերջինին պատասխանը: Կարեւոր և հետաքրքրական այդ էջերը կ'առնենք ամբողջութեամբ:

Ողորմելիս Վարդան Նուազեալ Ըստ(*) յամենայն գործառնութենէ բարեաց, յետինս յուսումնասէրս և յորդիս մար մերոյ Սիրնի Նորոյ, մեծափափագ բաղձնաւաք, և աստուածային անյագ ցանկութեամբ, և մեծ սիրով հաւատոյ, յուսանիչն մեր և ի շրջելն զաստուածային կտակարանսն, հաւաքեցի զայս աստուածաբնակ տառս, ուր և գտանէի բան ճահողակի, վկա և ջատագով ճշմարտութեան և ուղղափառ հաւատոյս, և յանդիմանիչ երկաբնակացն և այլոց հերձուածողացն, ի նուրբ զիրս և ի մեկնիչս, կամ ի թուղթս, և ի Հաւաքման Գիրս սուրբ Հայրապետացն, զոր արարեալ են ընդդէմ ամենայն հերձուածողաց:

Նա և դարձեալ մեր յաստուածապաշտ հայրապետական աթոռս, որ կոչի Հոռոմկաւ յառաջի ամի հայրապետութեան Տնառն Յոհաննիսի, ժողովեցաք զՀաւաքման Գիրս սուրբ հայրապետացն և մաքրափայլ վարդապետացն Հայոց, զոր արարեալ են յիւրաքանչիւր ժամանակս ընդդէմ հերձուածողաց, ուղիղ դաւանութիւն հաւատոյ՝ առաջնոց սուրբ հարցն հետեւելով. ուր դեղերեալ աշխատանաւք, և արարի ծայրաքաղս և համառատս, միայն զաղդոյ վկայութիւնս առեալ՝ առանց աւելորդ բանի, որ յերկարագոյնս ճեմի, ոչ ի մէնջ և ոչ յառաջինոցն, և ժողովեալ կատարեալ զսա ի թվին Հայոց ՈՄԳ [= 1205], ի թագաւորութեան Հայոց Լևոնի՝ որդւոյ Ստեփանէի:

Եւ արարի քեզ, ով սիրելի, առեհոն պատրաստ զէն և անաշխատ գիւտ ընդդէմ այլասեռից թիրաւարծ երկամիտ քննողացն: Քանզի խոցէր հոգիս յորժամ ոյրաւղք բաժանմանն տգիտաբար խաւսէին վասն երկու բնութիւնս, և կամ վասն այլ ինչ խորհրդոյ: Եւ այս հարկ արար մեզ լինել ձեռնաւուծիս ի յայս գործ աստուածային: Ո՛վ սիրելի եղբայր մեր և գլուխ եկեղեցոյ սրբոյ, զոր առեալ յարգեսցես որպէս երկիր արգաւանդ և ուսուցես զի մի պատժեսցիս ընդ քանքարաթաքոյցսն:

Եւ արդ յերեսս անկեալ աղաչեմ առ ով անկանի սա, և կամ ով աւգտի ի սմանէ, և հոգեով լուսաւորիք ի լուսոյ սորա, յիշեցէք զեղկիչիս Վարդան և զծնաւզան իմ

(*) Թերևս պիտի ըլլա՞ր՝ Նուազեալս:

և զեղբարսն և զուսուցանաւ զսն մեր, զի ապրեսցուք Աստուծով և աղաւթիւք ձեռովք ի յարակեզ և յանշխանելի բորբոքմանէ հրոյն յաւիտեանից և յանսպառ տանջանացն։ և որք յիշէք և դուք յիշեալ եղբուք առաջի Աստուծոյ ի բարի հատուցումն նորա։

Եւ ամենայն ոք որ զսա փոխէ և նորոգէ, աղաչեմ գրեւ և նորոգել զսակաւ բան յիշատակիս մերոյ վարձս մեզ յապագայն, որովք յիշիմք մեք յիտ մահու։ զի կարաւզ է Աստուած և ողորմած ի ձեռն այլոց այլում ողորմել։ Եւ որ լսաւք լինի և գրէ զսակաւ բան յիշատակիս այս, գրեցէ Աստուած և նորոգեսցէ զանուն նորա ի զպրովին կենացն յաւիտեանից, յանսպառ և յանթաւամ ժառանգութիւնսն ընդ ամենայն սրբոց իւրոց։

Խաւսմ եւ պատեւեմք պրոցս առ այնոսիկ որ ժառանգեմ զսա յապագա աւուրս։

Ծանոթաւոց լուսոյ կազմեալ են ճանապարհք իմ, և ճառագայթաբճակ հրարորբոք ջահիւ պայծառացեալ են նրբագոյն չափողք իմ։ Որք հաւատով և անթերի մտաւք դիմէք առ իս, եկայք ուրախութեամբ զհետ ծագման լուսոյ իմոյ, և տաւոյց զձեզ ի քաղաքն իմ սուրբ, ցնծալով խաղացէք, և մտէք ուրախութեամբ ընդ դրունս նորա։ Ընտիր են շինուածք նորա, և չափիղայ են քարինք պարապի նորա։ Վերնաշեմն յոսկոյ սրբոյ, յականց զմրլխտոյ ներքնաշեմ նորա։ Ի Լիբանանէ է փայտ նորա, և երազ պատրաստեցան մանկունք քաղաքի իմոյ։ Խորանք որ ոչ չարժեսցին ցիցք նորա։

Մաքուր է ճանապարհ նորա և հորդեցաք զչափիզս նորա։ Ի գնալդ քո մաքրեալ զսրտ քո և տեսցես զփառս քաղաքի իմոյ։ Դուստր եմ ես հաւրն լուսոյ և տեսանեմ զերեսս ծննդեան և բլխման նորա, և յամենայն ժամ համարձակիմ առ նա։

Որք կամիք տեսանել զնա, բազկաւք բարձէք զիս, և միշտ ի վերա ստեանց և սրտից ձերոց կառուցէք զիս։ Բարձր բարաւոզ ընթերցիր, և ի միտս քո պահեալ որ ուսար յինէն։ Ընկալ յինէն լոյս և մաւիր առանց երեսաց ամաւթիս առ Տէր քո, և շրջեա համարձակ՝ յանաչառ և յահագին հրապարակս նորա։ Պայծառ են քան զա-

րեզակն և զլուսին դամբարք իմ, և որ գա առ իս՝ ընդ ալմէ աթոռոյն տեսցէ զիս։ Հիմունք իմ հաւասար անդընդոց, և զուսս իմ բարձր է քան զկամարս երկնից։

Ունիմ առ իս զամենայն մարգարէսն և զառաքեալսն, զումարեալ եմ առ իս զհայրապետս և զվարդապետսն անթիւս։

Եկայք առ իս մանկունք Սիոնի սիրաւողք Աստուծոյ, և ցանկացողք աւրինաց նորա։ Ուսարուք զիս առաջնորդք և ժողովուրդք, և տարայց զձեզ առ երկնաւոր հայրն իմ։ Առ իս է բնակեալ Աստուած հայր իմ, և ես քաղաք հանգստեան եմ հոգւոյ և որդւոյ նորա։ Կարողագոյն է ծաղիկ իմ, և անճաղելի է հոտ նորա։ Առ զիս է հաւատս սրտի քո, և ուսով բարձ զիս։ Քաղցր եմ ես ի կոկորդոս ձեր ճաշակողացն զիս, և պարարտ է համ իմ ի ծամելիս նոցա որք հաւատով կարողանան ճաշակել զիս։

Բանալի եմ ես սրտի քո, որդեակ իմ, և ի բազուստ բաւէ զաւրութիւն իմ։ Հերձուածողաց մի՛ ընծայեր զիս, զի թերահաւատիցն հակառակ եմ ես։ Շատ ողբաս թէ տաս զիս, զի աղբով և ժանկով լցցին զիս։ Հաւատարիմ արանց շնորհեալ զիս, և տգէտ որ խնդրէ մի՛ արգելուր զիս։ Եւ գրաւական քեզ ընդ իմ ընկալ զսերտ հաւատս նոցա։

Տես, մի՛ մոռանար զսէր իմ։ Ըրթմարք քո սրով ճոր բնակեցուր զիս։ Ծարտարտան իմաստնոց շնորհեցէք զիս, զի պախարակեսցեն զհերձուածողս ի ձեռն լուսոյ իմոյ։

Պատասխանի Մարգարն առ Գիրեա։

Վա՛յ ինձ թէ ձրի կամ ընդ վայր ի թերահաւատս, կամ ի տգէտս տամ զքեզ հաւատ իմ և յոյս իմ։ ալ մտաւքս ի հոգիս, և հոգւովս ի շուռչս, և շնչովս յարիւնս, և արիւնովս ի մարմինս ծրարեալ պահեմ զքեզ, նարդոս և կինմահն և տաշի իմ. և ի բաժանել հոգւոյս չէ ինձ հնար հեռանալ ի քէն, ալ ընդ մարմնոյս ի գուրն մահու մուծանեմ ըզքեզ, որ դու յաւուրն ահագին պսակեսցես զզուսիս իմ (էջ 361-7)։

Իսկ գրքին վերջը կայ ուրիշ վերջաբան յիշատակարան մը, որուն դաւանաբանական մասերը, ինչպէս նաեւ գրքին բովանդակութեան ամփոփումը ներկայացնող տողերը

գեղջեւով՝ կու տանք պատմական արժէք ունեցող հատուածները միայն:

Եւ ողորմելիս Վարդան, որ հաւաքեցի զլուսափայլ մարգարիտս՝ հաւատոյ զատուած արեանկէ պայտառս, հետեւելով աստուածազան և բարեփառ սուրբ հարցն ուղիղ դաւանութեան, հաւատով խոստովանիմ անթերի մտաւք զհամագոյ և զամենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի և յամենայնի կատարեալ: . . .

Աւրհնեալ է ամենաբարի բնութիւնն Աստուծոյ կենդանւոյ և կենդանաբարի, որ զարացոյց զիս աւարտել զսա, և կատարեաց զցանկութիւնս իմ զոր ունէի ի վաղ ժամանակաց: Եւ կատարեցի զսա ի դառն և ի նեղ ժամանակս, ի թուականութեանս Հայոց ի ՈՄՁ [= 1207], ի հայրապետութեան Տեառն Յռնանէսի, և ի թագաւորութեան Հայոց Լեւոնի ի Կիրիկիա, և լցաք զսա աստուածային գանձիւ հաւատոյ՝ ըզբանս արրոցն ընդզէմ հերձուածողացն:

Եւ զու իմաստուն ընթերցաւով միամիտ և ժիր լեր, և յանժամ իմանաս թէ ո՞րքան հաւատոյ հաստատութիւն գտցես ի սմա: Բայց եղեալ է վկայութիւնքն յետ և յառաջ և ի միջին, և զու գիտ և նշանակեցիլ զի խառնեալ են ընդ միմեանս. ուսիր և ուսոյ, զի Աստուծոյ այս է ընդունելի. զի բերան իւր կոչեաց զնա որ հանէ զպատուականն յանարգէն:

Եւ Աստուած գիտէ թէ ո՞րքան եմ աշխատել ի հաւաքել սորա: Գանգի եղաք ի սմա՝ առաջին զսակաւ բան մեր յիշատակին: Երկրորդ զպատուէր գրցոս առ որ ժառանգեն զսա: Երրորդ զդաւանութիւն Սուրբ Երրորդութեան . . .

Այս քեզ լուծումն զոր արարաք բազում աշխատանաւք. ընկալ և զմեզ յիշեայ (էջ 502-8):

Արդ համեմատելով վերագրեալ յիշատակարաններու ոճը, ոգին, և մասնայատուկ բացատրութիւնները՝ Վարդան Այգեկցի ծանօթ այլ գրուածքներուն հետ, կը հասնինք այն եզրակացութեան թէ ներկայ «Հաւատարմատ» հաւաքածոն կազմողը Վարդան Վրդ. Այգեկցին է:

Այժմ գառնալով կարապետ Եպիսկոպոսի վերև յիշած ձեռագրին — օրինակ-

ուած 1209 թուին — յիշատակարանին մէջ կը հանդիպինք սա տողերուն. «... Գրեալ և փոխեալ յառաջին օրինակէն, ձեռամբ մեղապարտ Վարդանայ . . . և Լորեոք այս մեղապարտ Վարդանը ինքը Այգեկցին իսկ է. թէ ուրիշ Վարդան մը: Աւելի հաւանական կը թուի թէ Այգեկցին ըլլայ, որ իր նոր հաւաքած «Հաւատարմատ»-ին համանման, կամ թերեւ չափով մը փոփոխուած, մէկ օրինակութիւնը կը զրկէ իր ծանօթնեւրէն մէկուն, որ այժմ անծանօթ է մեզի:

Հոս կ'արժէ յիշել կարգ մը հետաքրքրական հեղինակներ և գրուածքներ, որոնցմէ վկայութիւններ առնուած են սոյն Հաւաքածոյին մէջ. ինչպէս,

Դիոնէսիոս Աղեքսանդրացի (էջ 308-310): Ա. Իգնատիոս (310-312): Եւսեբիոս Հոմա՝ Թուղթ առ Դիոնէսիոս (317-9): Երկաթա [= երեքթա] Անտիոքու Հայրապետի (էջ 355): Տիմոթի Անտիոքու Ասորցի (355-6): Ապոփեսի Եպիսկոպոսի և Մարտիրոսի (356): Տիմոթէոս (358-366): Ի Տիրանոյ Վարդապետին Թղթէն՝ որ առ Սինաքերիմ. «Ձկնի Բ բնութիւն ասորի անէձք . . . » (382-3): Ապեղեայ Բերսնի Եպս. ի (444): Յովսէփայ Արձնոյ Եպս. ի (444): Թոփնի Եթոպացոց Եպս. ի (444): Պանփելեա յառ ի Սկիւթացին Ճառէն (444): Նիլաուս (445): Ի Թղթէն Առիստիդա ուղղափառ փրիխոփայի. «Ջամնայն կիրս կրեալ ճշմարիտն հանգերձ մարմնափ . . . » (էջ 445: — Հմմտ. Մատ. Հայկ. Թրգմ. Նախնեաց, Վնեստիկ, 1889, էջ 320): Ի Թղթոյն Պաւստոսի Կոնսթոսի Եպիսկոպոսի. «Դանգի Բանն մարմին եղև . . . » (446): Դեմեդեա Նիդեսի Եպս. ի (446): Երիկոսի Լոկոտոնոյ Եպս. ի. «... Եւ դարձեալ ասէ մերձեցա առ կինն իմ մարգարէ . . . » (էջ 446-7: — Հմմտ. Կնիք Հաւատոյ, էջ 244): Ի Թղթէն զոր գրեաց Եղիակ առ Մաշտոց (448): Ամրիքոսի [= Ամփիլոքոս] յիկոնացոց Եպս. ի. «Նոյն ինքն թագաւոր և Աճ. . . և զմուս վասն չարչարանացն» (452-3: — Հմմտ. Մատ. Հայկ. Թրգմ., էջ 295. Նաև Ձեռ. Երևանի, Թ. 4425): Ի հաւատոյ Ճառէն Դաւթի Հայոց Վարդապետի անյաղթ փրիխոփայի. «Բանն Աճ կատարեալ մարմնացեալ . . . »

ԳՐԱԴՈՍԵԿԱՆ**A CATALOGUE
OF ARMENIAN MANUSCRIPTS**

By Sirarpie Der Nersessian

Dublin, 1958

Հայերէն ձեռագիրներու ցուցակագրութեան և ուսումնասիրութեան նուիրուած գործերու շարքին վրայ արժէքաւոր յաւելում մը արձանագրուեցաւ Պրոֆ. Սիրարփի Տէր Ներսէսեանի պատրաստած զոյգ հատորներով, որոնց առաջինը կը ներկայացնէ Chester Beatty Մատենադարանի հայերէն աւելի քան 60 ձեռագիրներու ցուցակագրութիւնը. իսկ երկրորդը նոյն ձեռագիրներէն առնուած նկարներու նմուշներ, զետեղուած 67 թերթերու վրայ, մաքուր տպագրութեամբ:

Օր. Տէր Ներսէսեան սոյն Ցուցակը և Ներածութիւնը աւարտած է 1951ի մամուրը: Ապա միեւնոյն արեւելքի մէջ իր անցուցած տարեկոր ժամանակի ընթացքին քաջած նորանոր տեղեկութիւններով աւելի ևս հարստացուցած է իր երկասիրութիւնը:

Գիրքին Ներածութիւնը, էջ xlx-xliv, (454-5): Ի հաւատոյ Ճառէն Մովսէսի Քերթաւզահաւրն. «Մարդկայինն աստուածային, և որ յերկրէ՞» յերկնից եկեալ...» (455-6): Թէոփիլոս Աղեքսանդրու (459): Ի հաւատոյ Քիլիսի Ստեփանոսի Սիւնեաց Եպս.ի, Պատասխանի Աստիողաց Պատրիարքին (էջ 460-462. — Հմմտ. Գիրք Քիլիսց, 331): Մանուէլի Եպս.ի վասն տաւնի Ուլին. «Ի ձեռն Կոստանդիանոսի մեծի հաստատեցաւ...» (463. — Հմմտ. Տաշեան, Ցուցակ, էջ 768ա): Ի հարցաքննութենէ Աստիող. «Ասէ Խաչակ առ Վրէժ Վարդապետն իւր...» (467-470. — Հմմտ. Տաշեան, Ցուցակ, էջ 722բ):

Վերոյիշեալ գրողներէն ոմանք ուրիշ տեղ չեն յիշուած ցարդ և շահեկան են մեծապէս:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

հայկական մանրանկարչութեան վրայ ընդհանուր տեսութիւն մըն է, ուր ցոյց կը տրուին յատկանշական գիծերը տարբեր զգորցներու, և անոնց աւելցութիւնները իրարու հետ: Հայ մանրանկարչական արուեստը ունի իր սեփական նկարագիրը, շնորհիւ այն իրողութեան որ հայ արուեստագէտները պարզ ընդօրինակողներ չեն եղած, այլ կրցած են օտար արուեստներու տարբեր և նոյնիսկ հակամարտ հոսանքները խառնել իրարու ճարտարօրէն և ծնունդ տալ ինքնուրոյն ստեղծագործութեանց, մասնաւորապէս այն դարերուն երբ Հայերը ունէին տնտեսական և քաղաքական ինքնիշխանութիւն:

Ձեռագիրներու նկարագրութիւնները տրուած են մանրամասնօրէն, հանդիմադ նկարներու ընդարձակ բացատրութեամբ: Ապա յաւելուածաբար կցուած են ճոխ դիտողութիւններ՝ ձեռագրի Գրչին և նկարչին ոճին, կենսագրութեան և այլ աշխատութեանց մասին: Այս կերպով հատորը ըստացած է մասնագիտական ուսումնասիրութեան մը հանգամանքը (էջ 3-193):

Ցուցակագրուած ձեռագիրները ընդհանրապէս եկեղեցական գիրքեր են, այսինքն 3 Աստուածաշունչ, 34 Աւետարան, 1 Նոր Կտակարան, 2 Սաղմոսարան, 5 Ծարական, 4 Ծալոց, 4 Յայամաուրք, 1 Մաշտոց, 1 Տօնացոյց, զանազանք 5, և հատակադրք 7. ընդամենը 67 կտոր: Գալով անոնց հնութեան՝ կը բաժնուին ռապէս. ԺԲ. Դար 3, ԺԳ. Դար 3, ԺԴ. Դար 7, ԺԵ. Դար 8, ԺԶ. Դար 8, ԺԷ. Դար 33, ԺԸ. Դար 5: Նկատելի է որ այս Ցուցակին պարունակած ձեռագիրներուն կէտը Աւետարան է. միւս կողմէ դարձեալ կէտը կը պատկանի ԺԷ. Դարուն:

Յարգելի Հելլինակուսիին կողմէ օգտագործուած բազմաբնուէն մատենագրութիւնը — որ տրուած է հինգ մեծագիր և երկօրէն էջերով (195-199) — և համեմատուած մեծաթիւ ձեռագիրներու ցանկը (էջ 211-216) ի յայտ կը բերեն ոչ միայն իր լայնածաւալ հմտութիւնը, այլ նաև խղճամիտ և ծանր աշխատանքը, որով կարելի եղած է ի գլուխ հանել այս հոյակապ և պատուաբեր երկը:

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ.